ԱՐԱՍՏԵՂ

Տժգոյն վերջալոյս է արդէն
Թօշնած վարդերու պըսակով.
Աղօ՞թք են թէ մրմունջ տրտմաքով
Զայներն իրիկուան՝ որ կ'երգեն...

Հէքիաթ պատմեցի վարդերուն,
Լացող անձրեւին խօսեցայ.
Զիս խօլ, մտորուն, մոլորուն
Տեսան ցընորքի ճամբուն վրայ...

Ծո՞ւխ էր բուրվառի. կեանքն անցա՜ւ.
Ծիծա՞ղ էր աղջըկայ, աղբիւրի.
Մնացին արցունքներ, վէրք ու ցաւ,
Լեցուն բաժակով մը լեղի...

Յոյսերն իմ հոգիս լքեցին.
Մութին հանգրուանն եմ հասեր.
Ես խոնջ ուղեւոր առանձին՝
Ճաքած եղէգ մ'եմ լըռասէր...

Ա՛լ ոչ երազի տառապանք,
Ո՛չ մէկ ըսպասում տենչանքի.
Խօսքի հեծեծուն արձագանգ.
Այս է առասպելն իմ կեանքի...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

* * *

Մորս արցունքի պարզությունն ունեք,
Գոհար կաթիլներ գարնան անձրեւի,
Դուք անհուն երկնի աչքից էք մաղում,
Երկինքը նրա դէմքն է երեւի:

Դուք մորս կաթի քաղցրությունն ունեք,
Զմրուխտեայ ջրեր մեր աղբիւրների,
Մայրս հանգչում է այս պայծառ հողում,
Նրա սրտից էք բխում երեւի:

Մորս ձեռքերի քնքշությունն ունեք,
Լեռներից թռած հովեր հարաւի,
Դուք գիշեր–ցերեկ ինձ էք որոնում,
Մորս մօտից էք գալիս երեւի:

Մորս համբոյրի ջերմությունն ունեք,
Անապակ շողեր ոսկեայ արեւի,
Դուք իմ կարօտով վառուել աշխարհում,
Այդպէս կրակ էք դարձել երեւի:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@